ԻՍՐԱՅԵԼԱ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սերգեյ Մինասյան

Հոդվածը նվիրված է իսրայելա-քրդական հարաբերություններին Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական գործընթացների շրջանակներում: Անդրադարձ է կատարվել պատմությանը և այդ գործընթացների զարգացման ընդհանուր դինամիկային, առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել դրանց վերլուծությանը Իսրայելի պետության կազմավորումից և հրեական պետության կողմից իր տարածաշրջանային ռազմավարությունում քրդական գործոնն արաբների դեմ կիրառելու փորձերից հետո: Հետազոտվել են նաև աշխարհաքաղաքական տարածաշրջանային փոփոխություններն Իրաքում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների գործողություններից հետո, ինչպես նաև դրանց ընդհանուր ազդեցությունն իսրայելա-քրդական հարաբերությունների վրա:

Ներածություն

2001թ. իսրայելցի, գերմանացի և հնդիկ մասնագետների խումբը հրապարակեց գիտական հետազոտությունների արդյունքները, ըստ որոնց հավաստիացվում էր, որ հրեաները քրդերի հեռավոր էթնիկ ազգականներն են հանդիսանում: Գիտնական ծագումնաբանների խմբի հետազոտությունների արդյունքների համաձայն, որը ղեկավարում էին Հրեական համալսարանի պրոֆեսորներ Արիել Օպենհեյմը և Մարիա Ֆեյրմանը, հրեական ժողովրդի և ներկայիս Քուրդիստանի բնակիչների գենետիկ նմանությունն ավելի ակնհայտ է, քան հրեաների և սեմիթական լեզվախմբին պատկանող այն արաբական ժողովուրդների միջև, որոնց շրջապատում ապրում են նրանք: Պրոֆեսոր Ա.Օպենհեյմի խոսքերով՝ ավելի վաղ հրապարակված ուսումնասիրություններում հրեաների և արաբների գենետիկ ազգակցությունը գրեթե անվիճելի էր թվում, քանզի դեռևս չէին հետազոտվել քրդերի քրոմոսոմները: Հրեա-արաբական ծագումնաբանական ազգակցությունը բացատրվում էր նրանով, որ հնարավոր է՝ պաղեստինյան արաբների մի մասը խառնվել է մուսուլմանություն ընդունած հուդայացիների հետ, քանի որ հրեաների և այլ՝ սիրիական, լիբանանյան, իրաքյան արաբների գենետիկ նմանությունն առավել թույլ էր արտահայտված [1, pp. 630-641]:

Այդ հետազոտությունը կատարվել է մարդու գենոմի վերծանման

բնագավառում ձեռք բերված վերջին բոլոր նվաճումների հաշվառմամբ և առավել ճշգրիտ սարքերի օգտագործմամբ: Գիտնականների կարծիքով՝ հրեաները և քրդերն ունեցել են ընդհանուր նախնիներ, որոնք ապրել են ներկայիս Իրաքի և Թուրքիայի սահմանային շրջաններում: Ինչպես նշում են վերոնշյալ հեղինակները, հրեաները ծագումնաբանորեն ավելի շատ նման են քրդերին, ինչպես նաև որոշ չափով հայերին ու իտալացիներին, ինչը թույլ է տալիս պնդել, որ հրեաները ծագումով Միջերկրական ծովի հյուսիսարևելյան շրջաններից են [2]:

Այս հետազոտությունների արդյունքները, անկախ իրենց գիտական հիմնավորվածությունից, ևս մեկ օրինակն են այն հատուկ հարաբերությունների, որոնք դարերի ընթացքում ստեղծվել են հրեաների և քրդերի միջև: Պատմական խոր արմատներ ունեցող այդ հարաբերությունները Իսրայելի պետության ստեղծմամբ ձեռք բերեցին հատուկ նշանակություն՝ Մերձավոր և Միջին Արևելքում քաղաքական զարգացումների ֆոնին: Դրանք ավելի հրատապ բնույթ ստացան 2003թ. Իրաքի դեմ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների սկսած պատերազմի արդյունքում տարածաշրջանում կատարված լայնածավալ աշխարհաքաղաքական տեղաշարժերից և դրանց հաջորդող քաղաքական գործընթացներից հետո:

1. Պատմական էքսկուրս

Հարյուրամյակների ընթացքում ներկայիս Հյուսիսային Իրաքի տարածքում ապրել են տարբեր կրոնական, էթնիկական և լեզվական խմբերի պատկանող ժողովուրդներ: Այս հողի վրա միասին ապրել են մահմեդականներ (քրդեր, թուրքմեններ), քրիստոնյաներ (հայեր, ասորիներ), եզիդիներ և հրեաներ: Ընդ որում, եթե քրդերը, եզիդիները և մասամբ ասորիներն ու հրեաներն ապրում էին գլխավորապես լեռնային շրջաններում՝ վարելով քոչվոր կյանք և զբաղվելով անասնապահությամբ, ապա հայերը և հրեաների որոշ մասը հիմնականում ապրում էին խոշոր քաղաքներում և բնակավայրերում՝ կարևոր դեր խաղալով առևտրի մեջ, ֆինանսների և կառավարման ոլորտներում [3, p. 43]:

Քրդաբնակ շրջաններում հրեաների բնակության և հրեականության տարածման պատմությունը խոր արմատներ ունի: Ըստ Աստվածաշնչի՝ մ.թ.ա. 722թ. ասորական թագավոր Սալմանասար III-ի կողմից իսրայելական թագավորության կործանումից հետո գերեվարված հրեաների մի մասը բնակեցվեց Մարաստանում և Միջագետքում: Այն բանից հետո, երբ Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսոր II-ը, որ մարերի հետ ջախջախել էր Ասորեստանի կայսրությունը, նվաճեց Հրեաստանը, մեծ թվով հրեաներ վերաբնակեցվեցին Բաբելոնում և շրջակա տարածքներում: Ավելի ուշ Բա-

բելոնի շատ հրեաներ, կապ պահպանելով Իսրայելում իրենց տոհմակիցների հետ, օգնություն էին ցուցաբերում նրանց Հռոմի դեմ պայքարում: Հռոմեական գերիշխանության ընթացքում նրանք ապստամբեցին Տրայանոս կայսեր դեմ, սակայն այդ ապստամբությունը դաժանաբար ճնշվեց: Պարթևների և պարսիկների օրոք Բաբելոնի հրեաները ներքին ինքնավարություն ունեին, ղեկավարվում էին հրեաների միջից նշանակվող էկզարքի (փոխարքա) կողմից [4, p. 140]:

Հռոմեական և հունական աղբյուրների համաձայն՝ մ.թ.ա. 83-71թթ. Տիգրան II Մեծի՝ Պաղեստին արշավանքների արդյունքում մեծ թվով հրեաներ վերաբնակեցվել են նաև Հայկական լեռնաշխարհի՝ Հյուսիսային Միջագետքին սահմանակից հարավային շրջաններում, մասնավորապես՝ Տիգրան Մեծի հիմնադրած մայրաքաղաք Տիգրանակերտում (Տիգրիսի վերին հոսանքներում) [5]: Ավելի ուշ նրանք հաստատվեցին նաև հարավում, Հյուսիսային Միջագետքում:

Հրեա ռաբբիները միսիոներական գործունեություն էին ծավալում տեղի բնակչությանը հրեական կրոնին բերելու նպատակով, և նրանց ջանքերն ապարդյուն չանցան: Մեր թվականության սկզբին հրեականություն էր ընդունել Արբել (Էրբիլ) քաղաքի բնակչության զգալի մասը և նույնիսկ, ըստ հրեական ավանդության և Թալմուդի՝ այնտեղ թագավորող Ադիաբենեի տիրակալների հարստությունը [6, p. 412]: Հովսեփոս Փլավիոսի «Հրեական պատերազմում» ասվում է, որ հռոմեացիների և ապստամբած հրեաների միջև առաջին ընդհարումներից մեկի ժամանակ (մ.թ. 66թ.) առանձնապես աչքի ընկան «Ադիաբենեի թագավոր Մանավազի ազգականները՝ Մանավազը և Քենեդայը»: Բացի այդ, Երուսաղեմի պաշտպանության հերոսների թվում Փլավիոսը հիշատակում է ոմն «Նաբաթիի որդու Ադիաբենեից՝ Խագեյր մականվանյալ, որ նշանակում է «կաղ» [7, p. 163]:

Համենայնդեպս, անվիճելի է, որ մեր թվականության սկզբին հրեականությունն ամուր դիրքեր ուներ ներկայումս քրդերով բնակեցված տարածաշրջաններում [8]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այստեղ էլ հենց, ինչպես ընդունված է կարծել, ստեղծվել է բիբլիական Թալմուդը: Բայց ինչպես և Արևելքի այլ հրեական համայնքներում, Ադիաբենեում սկսեց տարածվել քրիստոնեությունը: Այնուամենայնիվ, հրեաներն այստեղ զգալի նշանակություն ունեցող էթնիկական խումբ էին ընդհուպ մինչև XXդ. կեսերը և Իսրայելի կազմավորումը:

Ընտանիքում և սինագոգում քրդական հրեաները խոսում են արամեերենի բարբառներով, հասարակության մեջ խոսում են քրդերեն [9]: Որոշ քրդական հրեաներ էլ, ճիշտ է, խիստ սահմանափակ թվով, խոսում են նաև նոր արամեերենով [10]: Քրդական հրեաների թվին են դասում նաև Նիսե-

բինի շրջանում բնակվող արաբալեզու հրեաների ոչ մեծաթիվ համայնքները [11, p. 50]:

Քրդական և հրեական մշակույթների շատ ասպեկտներ այնքան են միահյուսվել, որ շատ տարածված հրեական ժողովրդական լեգենդները քրդերի ծագման մասին վերջիններիս հրեա են համարում: Ոմանք պնդում են, որ քրդերը ծագել են իսրայելական անջատված ճյուղերից մեկից կամ քրդերի ծագումը կապում են Սողոմոն թագավորի հետ և այլն [12]:

Քրդերի և տեղի հրեաների սերտ կապերի մասին է վկայում նաև այն, որ երբ XVIդ. վերջին-XVIIդ. սկզբին քրդական որոշ ցեղերի Շահ Աբասը վերաբնակեցրեց Խորասանի շրջաններում՝ Պարսկաստանի սահմանների պաշտպանության նպատակով, նրանց հետ միասին վերաբնակեցվեցին նաև քրդական հրեաները, որոնք այս շրջաններում հիմնեցին ոչ մեծ, բայց գործուն համայնք: Բնականաբար, հրեաների տեղափոխումը Խորասան նպատակ ուներ նպաստել այդ տարածաշրջանի տնտեսական զարգացմանը [3, p. 44]:

Քուրդ կանանց հարաբերական ազատության շնորհիվ քրդական հրեաների մեջ XVIIդ. ի հայտ եկավ առաջին կին ռաբբին՝ Ասենաթ Բարզանին: Նա ուղղափառ ռաբբի Սամուիլ Բարզանիի (մոտ 1630թ.) դուստրն էր: Սամուիլ Բարզանին Քուրդիստանում հիմնել է հրեական և թեմական դպրոցներ: Հետագայում Ասենաթը դարձավ Մոսուլի հրեական ակադեմիայի ղեկավարը [13]:

Հրեաների էթնիկական այս խումբն ունի մի քանի անվանում. քրդական հրեաներ, Զախոյի հրեաներ, ասորական հրեաներ: Քրդական հրեաները հաճախ իրենց անվանում են «անշեյ Թարգում»՝ «Թարգումի ժողովուրդ»: Նրանց խոսակցական լեզուն նոր արամեերենի արևելյան բարբառն է (Բաբելոնյան Թալմուդին ազգակից լեզու): Իհարկե, բաբելոնյան ժամանակների համեմատ այն խիստ փոփոխության է ենթարկվել և փոխառել է մեծ թվով պարսկերեն, քրդերեն, թուրքերեն, արաբերեն, ինչպես և դասական եբրայերենից վերցված փոխառություններ: Իրենք՝ քրդական հրեաները գտնում են, որ այդ լեզուն սերում է Ասորեստանի և Բաբելոնի հրեաների խոսակցական լեզվից և այն անվանում են «լեշոն թարգոմ»: Այն բավական շատ է տարբերվում քրիստոնյա բնակչության տեղական լեզվից, և իրաքյան արաբները հրեաների լեզուն անվանում են «ջաբալի»՝ «լեռնային»: «Զախոյի հրեաներին» այդպես են անվանում այն պատճառով, որ Զախո քաղաքում և նրա շրջակայքում (Իրաքի հյուսիս) ապրում էր այս էթնիկական խմբին պատկանող հրեաների մեծ քանակություն:

Քաղաքներում քրդական հրեաները զբաղվում էին արհեստներով, իսկ գյուղական վայրերում աճեցնում էին խաղող, ծխախոտ, ցորեն, և որ

հազվադեպ է պատահում հրեաների այլ խմբերի մոտ՝ զբաղվում էին անասնապահությամբ [11, pp. 205-220]: Քրդական հրեաների ընդհանուր թիվը XXդ. կեսերին, ըստ տարբեր գնահատականների, կազմում էր 40-50 հազար մարդ: Բերվում են նաև մի փոքր այլ տվյալներ: Իսրայելական աղբյուրները, հիմնականում հենվելով իրաքյան վիճակագրությանը, 1947թ. վիճակով Իրաքի հյուսիսում ապրող քրդական հրեաների բնակության հետևյալ պատկերն են ներկայացնում. Արբիլի նահանգ՝ 3.109 հրեա, Քիրքուք՝ 4.402, Մոսուդ՝ 10.345, Սուլեյմանիա՝ 2.271 և Դիյալա՝ 2.851 հրեա, ընդհանուր առմամբ՝ 22.618 հրեա քրդաբնակ շրջաններում [14, p. 16]:

Մոտավորապես XVIդ. համայնքն արդեն մշտապես ներկայացված էր Պաղեստինում: Հաջորդ երեք հարյուրամյակների ընթացքում գրեթե ոչ մի տեղեկություն չկա Պաղեստինի քրդական հրեաների տեղաշարժի մասին: Ավելի ուշ, 1900-1926թթ. միջակայքում Պաղեստին է գաղթել մոտ 1.900 քրդական հրեա, իսկ 1935թ.՝ ևս 2.500 մարդ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդական հրեաների ոչ մեծ մի խումբ բնակություն հաստատեց Կովկասում, Թբիլիսի քաղաքի շրջակայքում: Նրանց անվանում էին «լակլուխի» (ծագումն անհայտ է): Իրենք իրենց կոչում էին «սրէլ», որ ծագում է «իսրաէլ», այսինքն՝ «հրեա» բառից: 1930-ական թթ. կեսերին նրանց մի մասը հեռացավ ԽՍՀՄ-ից և Թուրքիայով անցավ Պաղեստին, իսկ նրանց մեծ մասը մնաց և 1951թ. բռնի ուղարկվեց Ղազախստան: Ի.Ստալինի մահվանից մի քանի տարի անց նրանք ռեաբիլիտացվեցին և աստիճանաբար մեկնեցին Իսրայել: Ղազախստանում մնաց ոչ մեծ մի համայնք: 1980-ական թթ. սկզբին քրդական հրեաների թիվը Խորհրդային Միությունում (հիմնականում Թբիլիսիում և Ալմա Աթայում) կազմում էր ոչ ավելի, քան 2 հազար մարդ [15]:

XXդ. սկզբին Իսրայելցիների համաշխարհային միությունն սկսեց դպրոցներ բացել քրդական շրջաններում և կրթական ծրագրեր իրականացնել քրդական հրեաների շրջանում [11, p. 48]: Այս միջոցառումները, ընդհուպ մինչև Իսրայելի պետության կազմավորումը, տարածվում էին նաև ոչ հրեա բնակչության վրա, ինչի արդյունքում քրդական շրջաններում ձևավորվեց կրթված մարդկանց մի շերտ:

Իրաքյան հրեաները, հատկապես նրանք, ովքեր ապրում էին երկրի կենտրոնական շրջաններում, դեռևս օսմանյան տիրապետության տարիներին կարևոր դիրք էին գրավում Իրաքի տնտեսական, մշակութային և նույնիսկ քաղաքական կյանքում: Մեծ Բրիտանիայի կողմից Իրաքին 1932թ. ֆորմալ անկախություն տրամադրելուց հետո իրաքյան հրեաները պահպանեցին իրենց արտոնյալ դրությունը Ֆեյսալի կառավարության տարիներին՝ կարևոր դեր խաղալով խոշոր բիզնեսում և երկրի պետական ծառայությունում: Հրեա-

ների նկատմամբ վերաբերմունքի փոփոխություններն առաջին անգամ նկատվեցին 1930-ական թթ. վերջին, երբ երկրում ակտիվացան նացիստական տրամադրությունները: 1941թ. Իրաքում նույնիսկ հրեական ջարդեր սկսվեցին, որոնք, սակայն, ճնշվեցին անգլիական բանակի կողմից [16, pp. 398-399]:

2. Իսրայելա-քրդական հարաբերությունները Իսրայելի պետության կազմավորումից հետո

1948-1949թթ. այսպես կոչված «Պաղեստինյան պատերազմի» կամ «Հանուն անկախության Իսրայելի պատերազմի» սկիզբը առիթ դարձավ, որպեսզի հրեաները դաժան հալածանքների ենթարկվեն արաբական կառավարության կողմից: Իրաքի հրեական համայնքը հայտնվեց ծանր կացության մեջ և սկսեց հեռանալ երկրից [16]: Արդյունքում՝ նրանց զգալի մասը լքեց Իրաքը և 1948-1952թթ. հաստատվեց նորաստեղծ Իսրայելի պետությունում: Այնուամենայնիվ, Իսրայելում նրանք ապրում էին առանձնացած համայնքով. նշում էին քրդական տոները, հավատարիմ մնում քրդական մշակույթին և լեզվին: Այն, որ Իրաքի գրեթե ողջ հրեական համայնքը (մոտ 120-130 հազար մարդ)՝ հնագույններից մեկը հրեական սփյուռքի մեջ, թողեց իր բնակության վայրերը, պայմանավորված էր Իսրայելի պետության ստեղծումից հետո նոր հնչեղություն ստացած սիոնիզմի գաղափարներով և անպաշտպան լինելու զգացողությամբ, ինչն առաջացել էր արաբա-իսրայելական առաջին պատերազմների արդյունքում: Միայն մոտավորապես 5 հազար հրեաներ, հիմնականում հյուսիսային շրջաններից, տարբեր պատճառներով հրաժարվեցին հեռանալ Իրաքից: Սակայն նրանց մեծ մասը, հատկապես 1967թ. «Վեցօրյա պատերազմից» հետո, բռնաճնշումների պատճառով նույնպես հեռացավ երկրից [16]: Գրեթե լիովին վերացավ քրդական հրեաների Զախոյի համայնքը՝ բացի տեղի մի քանի ուսնոր հրեաներից, որոնք հրաժարվեցին թողնել իրենց ունեցվածքը և հեռանալ՝ գերադասելով իսլամ ընդունելը [3, p. 45]:

Առավել բարդ խնդիրներից մեկն իրաքյան հրեաների տեղափոխման հարցն էր: Սկզբում Հրեական գործակալությունը նախատեսում էր նրանց Բասրայից նավերով տեղափոխել իսրայելական Էյլաթ նավահանգիստ: Սակայն դա անհնար էր Իսրայելի և Իրաքի՝ պաշտոնապես շարունակվող պատերազմական իրավիճակի, ինչպես նաև Եգիպտոսի կողմից Տիրանյան նեղուցի շրջափակման հետ կապված: Այնուամենայնիվ, Իրաքի կառավարությունը թույլ տվեց հրեաներին Իսրայել տեղափոխել ինքնաթիռներով, բայց չեզոք Կիպրոսի տարածքով: Այս լայնածավալ օդափոխադրումների արդյունքում, որոնք Իսրայելում հայտնի էին *«Operation Ali Baba»* անվամբ, 1950թ. մայիսից մինչև 1951թ. դեկտեմբեր Իրաքից դուրս բերվեց շուրջ 113

հազար հրեա: Իրաքյան հրեաների մի մասը, հիմնականում քրդական շրջաններից, Իրաքից հեռացավ Իրանի և Թուրքիայի տարածքներով: Իրաքից գաղթած հրեաների ընդհանուր թիվը կազմեց մոտ 121 հազար մարդ [16, pp. 398-399]:

Սակայն Իսրայել ժամանելուն պես քրդական և իրաքյան հրեաները բախվեցին բազում խնդիրների: Բնական դժվարություններին՝ կապված կյանքի սովորական պայմաններից կտրված տասնյակ հազարավոր մարդկանց չհարմարվելու հետ, գումարվում էր նաև տեղի հրեա բնակչության տարբեր խմբերի հետ փոխհարաբերությունների հարցը: Պատմությունն այնպես էր դասավորվել, որ աշխարհով մեկ սփռված հրեական ժողովրդի մեծ մասը կազմում էին, այսպես կոչված, աշքենազիները: Նույնիսկ Հոլոքոստից հետո, որի հետևանքով բնաջնջվեց եվրոպական հրեական սփյուռքի մեծ մասը, աշքենազիները (և նրանց հետնորդներն աշխարհի տարբեր մասերում) թվապես գերազանցում էին հրեաների մնացած բոլոր ճյուղերին: Հենց նրանք Իսրայելի կազմավորումից հետո դարձան բնակչության մեծամասնությունը՝ իրենց ձեռքը վերցնելով երկրի պետական կառավարման, մշակութային և հասարակական կյանքի բոլոր լծակները: Աշքենազի և մնացյալ հրեաների, հատկապես այսպես կոչված «արևելյան հրեաների» միջև միշտ առկա են եղել բարդություններ՝ կապված ինչպես աշխարհայացքային, լեզվական, սովորութային տարբերությունների, այնպես էլ ինքնության և սոցիալական ինքնարժևորման հետ: Սա հատկապես վերաբերում էր իրաքյան և քրդական հրեաներին, ովքեր, լինելով ամենահին համայնքի ուղղակի ներկայացուցիչները, պատմականորեն տարբերվում էին հրեական սփյուռքի մյուս հատվածներից ավելի բարձր մշակութային մակարդակով և ունեցվածքով: Իրաքյան հրեաները, որոնք իրենց «արիստոկրատ» էին համարում մյուս հրեաների համեմատությամբ, չէին կարողանում հաշտվել այն մտքին, որ նոր պետությունում նրանց նկատմամբ խտրականություն էր դրսևորվում: Նրանք ճնշումների էին ենթարկվում իրենց նահապետական (ըստ մյուս հրեաների) սովորությունների ու կենսակերպի, բարբառի, ինչպես նաև՝ ինչը շատ կարևոր գործոն էր, մահմեդականների հանդեպ ավելի հանդուրժողական (ընդհուպ մինչև վերջիններիս հետ խառնամուսնության ընդունումը) վերաբերմունքի համար: Իսրայելում տասնյակ տարիներ ապրելն անգամ չի թուլացրել քրդական հրեաների կարոտը նախկին հայրենիքի հանդեպ [17]:

Քրդական հրեաները միշտ կարևոր դեր են խաղացել քրդերի հանդեպ Իսրայելի քաղաքականության մեջ՝ ասես հանդիսանալով երկրում քրդական էթնիկական տարրի վերաբերյալ իմացության և տեղեկատվության հիմնական աղբյուրը: Քրդական էթնոքաղաքական գործոնը, թերևս, աշ-

խարհում որևէ այլ տեղ չի ըմբռնվում այնպես, ինչպես Իսրայելում և չի հանդիսանում այնպիսի սևեռուն ուշադրության, քաղաքական պլանավորման առարկա, ինչպես այս երկրում: Քրդերի և հրեաների միջև հարաբերությունների նոր էջ բացվեց 1960-ական թթ. կեսերին, երբ Իրաքի հյուսիսում՝ քրդաբնակ շրջաններում, սկսվեցին քրդերի զինված ելույթները Իրաքի կառավարության դեմ, որոնք, ի վերջո, հանգեցրին ոչ միայն բացահայտ պարտիզանական պայքարի բաղդադյան կառավարության դեմ, այլև տեղափոխվեցին հարևան երկրներ՝ Թուրքիա, Իրան, Սիրիա:

Ընդունված է կարծել, թե քրդերի զինված ելույթների հիմնական հրահրողներից մեկը եղել է Խորհրդային Միությունը: Երբ 1940-ական թթ. վերջերին տապալվեց, այսպես կոչված, «Մեխաբադի հանրապետությունը» Իրանի հյուսիս-արևմուտքում, նրա առաջնորդներից մեկին՝ մոլլա Մուստաֆա Բարզանիին հաջողվեց երկու հազար մարտիկներով հաղթահարել իրանական պատնեշը և մտնել Խորհրդային Միություն: 1957թ. Տաշքենդում և Չիրչիկում նախապատրաստություն անցած քրդերից կազմավորվեց մի բրիգադ՝ Մուստաֆա Բարզանիի գլխավորությամբ, որը գաղտնի ուղարկվեց Իրաքի քրդաբնակ շրջաններ: Այս բրիգադի անձնակազմից էլ դուրս եկան հիմնական դաշտային հրամանատարները, որոնք հետագայում վատ չդրսևորեցին իրենց քրդական ապստամբությունների ժամանակ ոչ միայն Իրաքում, այլև այլ երկրներում [18]:

Իրաքյան քրդերի սկզբնական հաջողությունները բաղդադյան կառավարության դեմ պայքարում իրենց վրա հրավիրեցին իսրայելական հատուկ ծառայությունների ուշադրությունը, որոնք նրանց մեջ սկսեցին տեսնել արդյունավետ դաշնակիցների Սիրիայի և Իրաքի (Իսրայելի առավել հետևողական հակառակորդները տարածաշրջանում) դեմ պայքարում: Ուստի, 1950-ական թթ. վերջերին արաբական պետությունների քուրդ փոքրամասնության հանդեպ Իսրայելի գործողություններում սկսեցին ի հայտ գալ տարրերն այն քաղաքականության, որը հետագայում դարձավ «ծայրամասային ռազմավարություն»:

3. «Ծայրամասային ռազմավարությունը» և քրդերի դերը Իսրայելի Մերձավոր և Միջինարևելյան աշխարհառազմավարությունում

Հրեական պետությունն իր անվտանգության ապահովման քաղաքականությունում սովորաբար հաշվի է առել այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին է «ծայրամասային ռազմավարությունը», որը նախատեսում է համագործակցություն տարածաշրջանի ոչ արաբական երկրների հետ [19, p. 309]: Նշենք, սակայն, որ «ծայրամասային ռազմավարության» հիմնական սկզբունքները մշակվել էին սիոնիզմի գաղափարախոսների կողմից դեռևս մինչև Իսրայե-

լի պետության առաջացումը, իսկ քրդերի հետ հրեական կազմակերպությունների քաղաքական կապերը հաստատվել են 1930-ական թթ.:

Դեռևս 1904թ. Թեոդոր Գերցլը իր աշխատություններում նշում էր, որ հրեական պետության (որը պետք է ստեղծվեր «Ավետյաց երկրում») սահմանները ձգվելու են «Եգիպտոսից մինչև Եփրատ»: Իսկ Պաղեստինի Հրեական գործակալության անդամ Ռաբբի Ֆիսշմանը ՄԱԿ կոմիտեի 1947թ. հուլիսի 9-ի նիստին իր զեկույցում հայտարարեց. «Ավետյաց երկիրը սփռվում է Եգիպտոսի գետերից մինչև Եփրատ և ներառում է Սիրիայի ու Լիբանանի տարածամասեր»: Այս ծրագրերում առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում քրդերը, որ բաժանված էին Իրանի, Թուրքիայի, ինչպես նաև Իսրայելի երկու առավել վտանգավոր արաբական հակառակորդների՝ Սիրիայի ու Իրաքի միջև [20]:

Որոշ հետազոտողների կարծիքով՝ դեռևս 1930-ական թթ. վերջերին Դավիթ Բեն Գուրիոնը նախանշել էր այն հիմնական սկզբունքները, որոնք կազմում էին, այսպես կոչված, «ծայրամասային ռազմավարության» կամ «դաշնակցային ծայրամասի տեսության» հիմքը: Իսրայելի պետության ստեղծումից հետո Բեն Գուրիոնը փորձեց ընդլայնել այդ ռազմավարությունը: Նա ջանքերը կենտրոնացրեց արաբական երկրների շուրջ ընդդիմադիր դաշինքի ձևավորման վրա՝ ռազմավարական գործընկերություն ծավալելով Թուրքիայի, Իրանի և Եթովպիայի հետ: Թեև այս քաղաքականության նպատակն էր նաև թուլացնել Սիրիան, Սուդանը, Լիբանանը և Եգիպտոսը, սակայն այդ պլանների գլխավոր խնդիրը Իրաքն էր: Հենց Իրաքից բխող սպառնալիքը կանխելու կամ Իրաքը թուլացնելու նպատակով էլ Իսրայելը գաղտնի, բայց բավական սերտ կապեր հաստատեց քրդական շարժման առաջնորդների հետ: Դա ակնհայտորեն հակադրվում էր Եգիպտոսի ղպտիների համայնքի հետ նման կապեր ստեղծելու փորձերին [20]: Սակայն պետք է նշել, որ սկզբում, հրեական պետության ստեղծումից հետո, դրա ղեկավարությունը 1940-ական թթ. վերջերին որոշ չափով զգուշավորությամբ էր վերաբերվում տարածաշրջանի էթնիկ և կրոնական փոքրամասնությունների աջակցության խնդրին, ինչը շատ բանով պայմանավորված էր հենց իր՝ Իսրայելի անբավարար կենսունակությամբ [21, p. 15]:

1930-ական թթ. վերջերին քրդերի հետ կապերի հաստատման նախաձեռնությունը պատկանում է սիոնիստական հատուկ ծառայության աշխատակից Ռուբին Շիլիային՝ «ծայրամասային ռազմավարության» գլխավոր գաղափարախոսներից մեկին: Բաղդադի հրեական դպրոցի ունկնդրի «քողի» տակ նա կազմակերպեց գործակալական ցանց և գաղտնի կապեր հաստատեց Իրաքի լեռնային քրդաբնակ շրջաններում: Այդ կապերը պետք եկան Հյուսիսային Իրաքի, Թուրքիայի և Իրանի տարածքներով դեպի Պա-

ղեստին իրաքյան հրեաների տեղափոխման ժամանակ: Արդեն 1950-ականների վերջին - 1960-ականների սկզբին Իսրայելը դարձավ քրդերին սպառազինություններով մատակարարելու հիմնական աղբյուրը և զորավարժանքների կազմակերպիչը՝ Իրաքի դեմ նրանց պայքարում: Տարբեր գնահատականներով՝ «Մոսադի» հազարավոր գործակալներ և իսրայելական բանակի հրահանգիչներ այդ ժամանակ գտնվում էին Իրաքի քրդաբնակ շրջաններում՝ իրականացնելով իրենց գաղտնի հանձնարարությունները:

Իրաքում «Մոսադի» գործունեության և քրդերին նրա աջակցության մասին տեղեկությունները բազմիցս հայտնվում էին իսլամական և իսրայելյան մամուլում, այլ պարբերականներում: «Մոսադի» նախկին գործակալ, ոչ անհայտ Վիկտոր Օստրովսկու տվյալներով՝ Իսրայելի հատուկ ծառայություններն օգտագործում էին նաև հումանիտար կազմակերպությունների կամավորականներին, իրենց իրաքցի գործակալներին՝ Իրաքում հատուկ դիվերսիոն-ահաբեկչական գործողությունների համար [22]:

1965-1975թթ. շարունակվում էր իրաքյան քրդերին սպառազինությունների ակտիվ մատակարարումը [23]: Քրդական ժողովրդավարական կուսակցության «Պարաստին» հետախուզական հատուկ ծառայությունը նույնպես ստեղծվել է «Մոսադի» օգնությամբ, 1960-ական թթ. վերջերին: Իրաքի հյուսիսում իսրայելական հետախուզության գործողությունները հատուկ նշանակություն ունեին Իսրայելի համար, քանի որ իրաքյան քրդերի դեմ մարտերին մասնակցում էին ոչ միայն Իրաքի զորքերը, այլև մեկ այլ արաբական պետության՝ Սիրիայի կանոնավոր զորքերը, որտեղ նույնպես իշխանությունը Բաաս կուսակցության ձեռքին էր: Իրաքի հյուսիսում քրդերի դեմ 1963թ. ակտիվ մարտական գործողությունների սկսվելուց հետո Սիրիան, զգուշանալով երկրում քրդական անջատողականության տարածումից, պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Բաղդադին քրդական ջոկատների դեմ պայքարում: Սիրիական զորքերը, ավիացիայով և ծանր հրետանիով հանդերձ, ակտիվ մասնակցություն ունեցան քրդերի դեմ մարտերին Մոսուլի, Զախոյի և Դոհուկի շրջաններում: Ավելին, քանի որ այդ ժամանակ Սիրիայի և Իրաքի բաասական վարչակարգերը մեկ պետության մեջ միավորվելու փորձեր էին ձեռնարկում, 1963թ. հոկտեմբերին Դամասկոսում ստորագրվեց ռազմական դաշինքի մասին համաձայնագիր, ըստ որի՝ նախատեսվում էր ստեղծել միասնական սիրիա-իրաքյան զինված ուժեր: Բայց որոշ ժամանակ անց, երբ միավորման փորձերը ձախողվեցին, և քրդերի դիմադրությունն էլ Իրաքի հյուսիսում դարձավ էլ ավելի անողոք, սիրիական զորքերը դուրս բերվեցին քրդաբնակ շրջաններից [24, cc. 64-76]:

Այսպիսով, իսրայելցիների կողմից իրաքյան քրդերին ցուցաբերվող

աջակցության արդյունքում սիրիական զորքերի մի զգալի մասը հեռացվեց Իսրայելի սահմաններից: Իրաքյան զորքերն էլ զբաղված էին երկրի հյուսիսում քրդերի ապստամբությունները ճնշելով, ինչն էլ խանգարեց 1973թ. Իսրայելի դեմ «Դատաստանի օրվա պատերազմին» Իրաքի մասնակցությանը, քանի որ դա պահանջում էր Իրաքի բանակի ստորաբաժանումները դուրս բերել ինչպես ներքին (քրդական) ճակատից, այնպես էլ Իրանի հետ սահմաններից: Իսրայելցի մասնագետ Օֆրա Բենյիոն *(Ofra Bengio)* այսպես է գնահատում Իրաքի քրդերին Իսրայելի աջակցությունը. «Այդ օգնությունը, թեև ժամանակի ու տեղի առումով սահմանափակ, արտացոլում էր Իրաքի դեմ ամերիկա-իսրայելա-իրանական դավադրության տեսությունը: Այն Իրաքին ցույց էր տալիս, որ թեև վերջինս Իսրայելի հետ ընդհանուր սահման չունի, բայց պետք է վճարի հակամարտության (նկատի ունի արաբա-իսրայելականը - *Ս.Ս.)* մեջ իր ներգրավվելու համար, ինչն արդյունքում երկկողմանի էական գործոն դարձավ ընդհանուր արաբա-իսրայելական հակամարտությունում: Իսրայելի օգնությունը քրդերին ընկալվում էր որպես անմիջական սպառնալիք իրաքյան պետության ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը: Իրաքն ինքը այդ օգնությունն ընկալում էր որպես, ոչ ավելի, ոչ պակաս, «երկրորդ Իսրայելի» ստեղծման փորձ Իրաքի հյուսիսում» [25]:

1950-ական թթ. վերջերից Իսրայելի հատուկ ծառայություններն ամենաակտիվ ձևով համագործակցում էին ԿՀՎ-ի հետ շահական հետախուզական *SAVAK* ծառայության կազմավորման գործում: Իսրայելական, ամերիկյան և իրանական հետախուզական ծառայությունները սերտորեն համագործակցում էին Իրաքի հյուսիսում ապստամբ քրդերին աջակցելու գործում: Այդ համագործակցությունը շարունակվում էր ընդհուպ մինչև 1975թ., երբ շահական կառավարությունը, ջանալով բարելավել հարաբերություններն Իրաքի հետ, կնքեց, այսպես կոչված, Ալժիրյան համաձայնագիրը և դադարեցրեց աջակցությունն Իրաքի քրդերին [26, p. 211]: «Մոսադի» վերաբերյալ ԿՀՎ 1979թ. զեկույցում ասվում էր. «Իրանի հետ Իսրայելի հարաբերությունների գլխավոր նպատակը իսրայելամետ և հակաարաբական քաղաքականության զարգացումն էր Իրանի ղեկավարության մեջ: «Մոսադը» *SAVAK-ի* հետ համատեղ գործողությունների մեջ ներգրավված է եղել բազում տարիներ՝ սկսած 1950-ական թթ. վերջերից: «Մոսադն» օգնում էր *SAVAK-ի* գործունեությանը և աջակցում Իրաքի քրդերին: Իսրայելցիները նույնպես կանոնավոր կերպով իրանական հետախուզությանն էին հանձնում արաբական երկրներում Եգիպտոսի գործունեության, իրաքյան զարգացումների և կոմունիստների՝ Իրանին սպառնացող գործունեության մասին զեկույցներ» [27, p. 169]: Ինչպես *SAVAK-ի* հետ հարաբերությունն-

րում, այնպես էլ հատկապես իրաքյան քրդերի հետ կապեր հաստատելու գործում մեծ դեր է խաղացել Իրանում Իսրայելի այն ժամանակվա զինվորական կցորդ Յակով Նիմրոդին [27]:

«Մոսադի» նախկին ավագ սպա Էլիզեր Ցաֆրիրի խոսքերով՝ Իսրայելն իր զինվորական խորհրդականներն ուներ քրդական ապստամբության ղեկավար մոլլա Մուստաֆա Բարզանիի կենտրոնակայանում, 1963-1975թթ.՝ վարժեցնելով քրդական ջոկատներին և ապահովելով նրանց հրաձգային զենքով, դաշտային և զենիթային հրետանով: ԱՄՆ-ը նույնպես մասնակցում էր այդ կամպանիային: Փոխարենն Իսրայելը, ի թիվս այլոց, քրդերից արժեքավոր հետախուզական տեղեկություններ էր ստանում [28]: Իսրայելը քրդերին աջակցելու համար տասնյակ միլիոնավոր դոլարներ ծախսեց՝ ապահովելով նրանց շահական Իրանի միջոցով, որն Իրաքում սեփական նպատակներն էր հետապնդում և սերտ հարաբերություններ էր պահպանում Իսրայելի հետ ընդհուպ մինչև 1979թ.: Բայց Իսրայելը, ըստ Էլիզեր Ցաֆրիրի, երբեք չի աջակցել Թուրքիայի քրդերին Թուրքիայի դեմ պայքարում կամ Իրանի քրդերին՝ շահի օրոք [28]:

Չի կարելի բացառել նաև այն, որ իսրայելական հետախուզությունը իր քուրդ աղբյուրների և շահական նախկին *SAVAK* հատուկ ծառայության գործակալների միջոցով է ստացել անհրաժեշտ տեղեկություններ (չնայած տվյալ պարագայում առավել արժեքավոր էին ավիացիոն հետախուզության տվյալները) Իրաքի միջուկային ռեակտորի (Թամուզ-1, Օսիրակ) գտնվելու վայրի և տեղադրության մասին, որը ոչնչացվեց 1981թ. հունիսին իսրայելյան ՌՕՈՒ օդային հարձակման արդյունքում [29, c. 143]:

Սակայն 1975թ. Ալժիրյան համաձայնագրերը, որոնց համաձայն՝ Բաղդադը զիջում էր որոշ սահմանամերձ տարածքներ, նախատեսում էին շահական կառավարության հրաժարումը քրդերին աջակցելուց: Միաժամանակ Իսրայելը նույնպես զրկվեց Իրաքի քրդերին օգնելու համար Իրանի տարածքն օգտագործելու հնարավորությունից, ինչի արդյունքում նրանց ելույթները դաժանաբար ճնշվեցին: Վերջնականապես, ինչպես թվում էր, իսրայելցիների աջակցությունն Իրաքի քրդերին դադարեցվեց 1979թ. իրանական հեղափոխությունն սկսվելուց հետո:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո «Մոսադը» և ԿՀՎ-ն սկսեցին աշխատել հակառակ ուղղությամբ՝ Իրաքի և Թուրքիայի քրդաբնակ վայրերից գործելով (հատկապես «Մոսադը») Իրանի դեմ: Իրանի քրդաբնակ շրջաններում ԿՀՎ-ի և «Մոսադի» ակտիվ քայքայիչ գործունեության մասին են վկայում Թեհրանում նախկին ամերիկյան դեսպանության՝ քրդական հարցի շուրջ հրապարակած նյութերը [30, cc. 120-135]:

Բայց Իսրայելը, մնալով մեկուսացած և բոլոր կողմերից թշնամաբար

տրամադրված արաբական պետություններով շրջապատված, չէր կարող վերջնականապես հրաժարվել ինչպես այդ երկրների քրդերին, այնպես էլ այլ էթնիկ և կրոնական փոքրամասնություններին օժանդակելուց: 1982թ. փետրվարին իսրայելցի լրագրող և Իսրայելի ԱԳՆ նախկին կցորդ Օդեդ Յինոնը Համաշխարհայի սիոնիստական կազմակերպության տեղեկատվության վարչության *Kivunim* պարբերականում հրապարակել է «1980-ական թթ. ռազմավարություն Իսրայելի համար» *(A Strategy for Israel in Nineteen Eighties)* հոդվածը, որի հիմնական գաղափարը Իսրայելի՝ արաբական պետությունների հզորության քայքայմանն ուղղված (առաջին հերթին՝ ներսից, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների օգնությամբ) ակտիվ քաղաքականությունը շարունակելու անհրաժեշտությունն էր: Հաշվի առնելով այն, որ հեղինակը իսրայելական պաշտոնաթող դիվանագետ էր, իսկ հոդվածը հրապարակվել է նման հեղինակավոր հրեական կառույցի հանդեսում, կարելի է հավաստել, որ «ծայրամասային ռազմավարության» գաղափարները շարունակում էին տիրապետող մնալ Իսրայելի քաղաքական ընտրանու և առավել ևս՝ հրեական սփյուռքի (որն ավելի ագրեսիվ է տրամադրված արաբական պետությունների նկատմամբ) ներկայացուցիչների շրջանում [20]:

Ժամանակին Օ.Յինոնի հոդվածը արձագանքների իսկական փոթորիկ առաջացրեց ինչպես արաբական և արևմտյան, այնպես էլ հրեական մամուլում: 2003թ. Իրաքում ԱՄՆ պատերազմի հետ կապված իրադարձությունները կրկին հետաքրքրություն առաջացրին հրապարակման նկատմամբ, որում շատ հետազոտողներ տեսնում էին արաբական Մերձավոր Արևելքի հատվածայնացման պլանների իրականացումը [31]:

4. Իսրայելա-քրդական հարաբերություններն արդի փուլում

Իսրայելի և քրդերի առանձնահատուկ հարաբերությունները կրկին դրսևորվեցին Իրաքի դեմ 1991թ. ԱՄՆ-ի և միջազգային կոալիցիայի գործողության ժամանակ: Ինչպես հայտնի է, «Փոթորիկ անապատում» գործողության ակտիվ փուլի սկսվելուց հետո երկրի հարավում և քրդաբնակ հյուսիսում շիա մահմեդականների շրջանում բռնկվեցին դաշնակիցների կողմից հրահրված ապստամբություններ բաղդադյան վարչակարգի դեմ: Այդ ապստամբությունները դաժանաբար ճնշվեցին կառավարական զորքերի կողմից: Դրան հաջորդած բռնաճնշումների ընթացքում երկրի հյուսիսում ստեղծվեց ծայրահեղ վատ իրավիճակ, և տասնյակ հազարավոր քրդեր դարձան փախստական: Հրեական կազմակերպություններն ամբողջ աշխարհում Իրաքի քրդերին օգնելու ակտիվ գործունեություն սկսեցին, ինչպես նաև հզոր քարոզչական ու լոբբիստական միջոցառումներ ձեռնարկե-

ցին՝ բռնաճնշումները դադարեցնելու նպատակով Իրաքի վրա ճնշում գործադրելու ուղղությամբ [32, p. 64]: Իսրայելն իր համակրանքը քրդերի նկատմամբ ցույց էր տալիս թուրք-իրաքյան սահմանով դեղամիջոցների և առաջին անհրաժեշտության մթերքների լայնածավալ մատակարարումներ կազմակերպելու միջոցով: Այս գործունեությունը հիմնականում կազմակերպվել էր Իսրայելի իրաքյան հրեաների համայնքի կողմից: Իրաքյան հրեաները նույնիսկ մարդաշատ ցույց էին կազմակերպել Իսրայելի վարչապետ Շամիրի Երուսաղեմի նստավայրի առջև, ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ նրա հանդիպման ժամանակ, ամերիկյան կառավարությանը կոչ անելով պաշտպանել քրդերին բռնաճնշումներից [33]:

Սակայն Իսրայելի վերաբերմունքը քրդերի նկատմամբ շատ բանով արդեն կախված էր իսրայելա-թուրքական համագործակցությունից: Ինչպես 1997թ. մայիսին նշել է Իսրայելի վարչապետ Բ.Նաթանյահուն, ահաբեկության սպառնալիքը միավորում է Թուրքիային և Իսրայելին. «Թուրքիան վնասներ է կրում *PKK-ի* ահաբեկչական հարձակումներից, և մենք տարբերություն չենք տեսնում *PKK-ի* ահաբեկչության և այն բանի միջև, ինչին բախվում է ինքը՝ Իսրայելը»: Նաթանյահուի խոսքը հատկանշական էր ոչ միայն նրանով, որ նա արտահայտվեց քրդական պետության ստեղծման դեմ, այլև նրա այն խոսքերով, որ Սիրիայի ու Իսրայելի միջև չի կարող խաղաղություն կնքվել, քանի դեռ Դամասկոսը չի դադարեցրել աջակցությունը *PKK-ին* [34]:

Իսրայելի անվտանգության քաղաքականության առաջնայնությունների փոփոխությունը հարկադրեց վերանայել վերաբերմունքը թուրքական քրդերի նկատմամբ [35]: Դա դրսևորվեց իսրայելական օդուժի՝ Քրդական բանվորական կուսակցության դեմ Լիբանանում, Բեքաայի հովտի հյուսիսում իրականացրած «Ցասման ողկույզներ» գործողության ընթացքում, ինչպես նաև այն աջակցությամբ, որ իսրայելական հետախուզությունը ցուցաբերեց թուրքական քրդերի առաջնորդ Ա.Օջալանին գտնելու և բռնելու գործում [36, c. 14]:

Սակայն 2003թ. Իրաքի դեմ ԱՄՆ-ի նոր ռազմական գործողության ավարտից հետո, որից, հավանաբար, ամենից շատ շահեցին քրդերը, թուրքական մամուլում հայտնվեցին տեղեկություններ այն մասին, որ քրդական առաջնորդներից մեկը ծագումով հրեա է, և որպես արդյունք՝ «Իսրայելը շուտով կսկսի սերտ կապեր հաստատել Իրաքի հյուսիսում դե-ֆակտո գոյություն ունեցող քրդական պետության հետ»: Մի քանի շաբաթվա ընթացքում նման սցենարն ակտիվորեն արծարծվել է թուրքական լրատվամիջոցներում: 2003թ. փետրվարի 19-ին թուրքական *Hurriyet* թերթում հրապարակվեց մի հոդված, որում նշվում էր, որ *KDP* առաջնորդ Մասուդ Բարզա-

նին էթնիկ հրեա է և սերում է քրդական ռաբբիների հինավուրց տոհմից: Հոդվածը հղում էր կատարում *The Folk Literature of the Kurdistani Jews* հայտնի աշխատությանը՝ հրապարակված դեռևս 1982թ., ինչպես նաև թուրք պատմաբան Ահմեդ Ուջարի հետազոտությունների արդյունքներին, որը XIXդ. թուրքական արխիվային նյութերում գտել է տեղեկություններ Բարզանի ազգանվամբ քուրդ ռաբբիի գործունեության մասին: Ըստ թուրքական մամուլի՝ Մ.Բարզանին իբր պետք է գլխավորի նոր իսրայելամետ քուրդ-հրեական պետությունը բիբլիական «Ավետյաց երկրի» տարածքում, որը ձգվում է Նեղոսից մինչև Եփրատ, ներառելով նաև Հյուսիսային Իրաքի քրդաբնակ տարածքները:

Բայց *The Folk Literature of the Kurdistani Jews-ի* հեղինակ, պրոֆեսոր Յոնա Սաբարը թուրքական այս հրապարակումների առնչությամբ իր մեկնաբանություններում նշում էր, որ դրանք հենվում են պատմության ոչ ճիշտ մեկնության վրա: Ըստ Սաբարի՝ XVIդ. քուրդ ռաբբի Շամուել Ադոնին նույնպես կրում էր «Բարզանի» անունը, ինչը նշանակում է, որ նա ծագումով Բարզան քաղաքից է: Նա եղել է Բարզանի ռաբբիների հայտնի գերդաստանի հիմնադիրը: Այդ գերդաստանի ներկայացուցիչն է նաև կին ռաբբի Ա.Բարզանին (XVIIդ.): Յոնա Սաբարի կարծիքով՝ քիչ հավանական է, որ Մասուդ Բարզանին պատկանած լինի այդ գերդաստանին, քանի որ Բարզանին լայնորեն տարածված քրդական ազգանուն է, բացի այդ՝ Իրաքի այդ շրջանում քիչ հրեաներ են մնացել:

Ստամբուլցի հրեա պատմաբան Ռիֆաթ Բալին նույնպես նշում է, որ Մ.Բարզանիի հավանական հրեական ծագման մասին ողջ պատմությունը մասն է կազմում մի ընդարձակ հայեցակարգի, որը վերջին ժամանակներս տարածված է թուրքական պահպանողական-ազգայնական և իսլամական շրջանակներում և մեծ տարածում ունի նաև Թուրքիայի հասարակության մեջ: Նրա խոսքերով՝ «իսլամիստները պնդում են, որ Իսրայելն ուզում է օգտագործել «քրդական խաղաքարտը» և ստեղծել նոր հրեական պետություն, որ կսփռվի Նեղոսից մինչև Եփրատ՝ ներառելով Հյուսիսային Իրաքի և Հարավարևելյան Թուրքիայի քրդական շրջանները: Դա կապվում է Թուրքիան մասնատելու պլանների առնչությամբ թուրքերի ունեցած երկյուղների հետ»: Ավելացնենք նաև, որ մի քանի տարի առաջ Թուրքիայում հրատարակվեց դոկտոր Հարուն Յայայի «Իսրայելի քրդական խաղաքարտը» *(Israel's Kurdish Card)* գիրքը, որում խոսվում էր քրդերի հետ միասին, Իրաքի և Թուրքիայի հաշվին սահմաններն ընդարձակելու Իսրայելի պլանների մասին [13]:

Համենայնդեպս, միանգամայն հստակ է, որ Իրաքի հյուսիսում քրդական ինքնավարության ստեղծումը, 2003թ. պատերազմից և Ս.Հուսեյնի վար-

չակարգի տապալումից հետո, սկսվեց Իսրայելի և քրդերի հարաբերությունների նոր փուլ, ինչը կարող է լուրջ սահմանափակիչ դեր ունենալ տարածաշրջանի այլ պետությունների հետ Իսրայելի քաղաքական կապերի առումով: Այնուամենայնիվ, «քրդերը հույս են դնում, և ոչ առանց հիմքի, ոչ միայն Իսրայելի պետական կառույցների, այլև այդ երկրի հարյուր հազար այն քրդական հրեաների աջակցության վրա, որոնք մինչ այդ ապրում էին Քուրդիստանի տարածքում: Եվ այդ համագործակցությունը, ընդ որում՝ հենց համակողմանի, հետագայում, ըստ երևույթին, միայն զարգանալու է՝ չնայած Իրանի և մի շարք արաբական պետությունների դիմակայությանը» [37]:

2004թ. իսրայելյան լրատվամիջոցները տեղեկացրին Իրաքի քրդերի քաղաքական առաջնորդներ Մ.Բարզանիի և Ջ.Թալաբանիի հետ իսրայելյան պաշտոնյաների հետ հանդիպումների մասին, իսկ Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը հրապարակավ հաստատեց իրաքյան քրդերի հետ լավ հարաբերությունների առկայությունը [38]: Հետագայում Իսրայելի և իրաքյան քրդերի համագործակցությունն ակտիվորեն զարգանում էր առաջին հերթին անվտանգության ոլորտում: Վերջին ժամանակներս նորանոր տեղեկություններն են հայտնվում այն մասին, որ Իրաքի հյուսիսում իսրայելցի մասնագետները ներգրավվում են քրդական «փեշմերգա» ջոկատների մարտիկներին սովորեցնելու և մարզելու գործում (վերջիններս աշխարհազորայիններից աստիճանաբար վերածվում են քրդական ինքնավարության կիսականոնավոր բանակի): Եվ թեև իսրայելյան լրատվամիջոցներում հայտնված տեղեկատվությունն այդ մասին հերքվեց թե՛ Իսրայելի պաշտոնյաների, թե՛ քրդական վարչակազմի ղեկավար Մ.Բարզանիի և թե՛ Իրաքի նախագահ Ջ.Թալաբանիի (նաև Քուրդիստանի հայրենասիրական միության առաջնորդը) կողմից, այնուամենայնիվ, փորձագետները համոզված են դրանում: Իսրայելի կառավարությունը թուրքական իշխանություններին պաշտոնապես հաղորդել է. եթե իսրայելյան քաղաքացիներն Իրաքում մարզում էլ են քուրդ զինվորներին, ապա դա նրանք անում են առանց թույլտվության, սեփական պատասխանատվությամբ [39]:

Այնուամենայնիվ, քրդերի հետ Իսրայելի հարաբերությունների զարգացումը շարունակում է բացասաբար անդրադառնալ իսրայելա-թուրքական հարաբերությունների վրա: 2006թ. ամռանը իսրայելական բանակի ներխուժումը Լիբանան և հաջորդող իրադարձությունները, այդ թվում՝ մերձավորարևելյան այդ երկիր թուրք խաղաղարարներ առաքելու հնարավորությունը, կրկին ուշադրության առարկա դարձրին Թուրքիայի և Իսրայելի ռազմավարական հարաբերությունների հետագա զարգացման հարցը՝ քրդական հիմնախնդրի համատեքստում: Ինչպես հայտնի է, վերջին տարիներին խորացած հակաամերիկյան տրամադրությունները և

թուրք-իսրայելական հարաբերությունների ճգնաժամը (պաղեստինյան և քրդական հարցերում Իսրայելի դիրքորոշման պատճառով) հարկադրեցին Թուրքիային ակտիվացնել իր գործողությունները տարածաշրջանում՝ առանց Իսրայելով պայմանավորելու [40]: Թուրքիայի ղեկավարությունը որոշում կայացրեց հօգուտ Մերձավոր և Միջինարևելյան ավելի ակտիվ տարածաշրջանային քաղաքականության, ինչը դժվարացնում է իսրայելա-թուրքական հարաբերությունները հավասարակշիռ վիճակում պահելը և, համապատասխանաբար, կհանգեցնի Իսրայելի և քրդերի միջև քաղաքական կապերի էլ ավելի խորացմանը: Այս իրավիճակի վրա իր ներգործությունը կարող է ունենալ նաև Իրանի միջուկային ծրագրի շուրջ քաղաքական գործընթացների զարգացումը, ինչն, անկասկած, կանդրադառնա իսրայելա-թուրքական հարաբերությունների վրա [41]:

Իրանական գործոնի հրատապությունը ներկայումս որոշիչ տարր է իսրայելա-քրդական հարաբերություններում: Իրաքի տարածքից, Իրանի քրդաբնակ շրջանների բնակիչներից կազմված կազմակերպությունների օգտագործմամբ, գաղտնի գործողություններ անցկացնելու փորձերը (այդ թվում և ամերիկյան հատուկ ծառայությունների հետ սերտ փոխկապվածությամբ) վերջին տարիներին դարձել են Իսրայելի «քրդական ռազմավարության» էական բաղադրիչը: Սակայն այս պարագայում այն նպատակներին, որ հետապնդում է Իսրայելը իրանական քրդերի հետ հարաբերություններում (բացի մշտական հրամայականից, այն է՝ Իրանի թուլացումը, նրա աստվածպետական վարչակարգի վերացումը և ազդեցության թուլացումը տարածաշրջանում), ավելացել է մի նոր կարևոր խնդիր՝ հնարավոր բոլոր միջոցներով դիմակայել Թեհրանի միջուկային ծրագրի զարգացմանը: Ամերիկյան և իսրայելյան հատուկ ծառայությունների աջակցությամբ էլ Իրաքի տարածքից Իրանական Քուրդիստան են ներթափանցում քրդական կազմակերպությունների գրոհայինները, որոնք մտնում են 2006թ. մարտին Էրբիլում (Իրաքյան Քուրդիստան) ստեղծված Արևելյան (Իրանական) Քուրդիստանի միավորված ճակատի մեջ: Մասնավորապես, դրանք Իրանական Քուրդիստանի ժողովրդավարական կուսակցության, Իրանական Քուրդիստանի պայքարի կազմակերպության և Քուրդիստանի (Իրան) հեղափոխական միության ջոկատների գրոհայիններն են, որոնք ջանում են խարխլել իրանական վարչակարգը և տապալել այն կոալիցիայի՝ Իրաքում կենտրոնացված զորքերի օգնությամբ [42]: Նրանց հետ միասին Իրանի տարածք են թափանցում նաև Իսրայելի հատուկ ստորաբաժանումների մարտիկները՝ Իրանի միջուկային և ռազմական օբյեկտների նկատմամբ հսկողության գերզգայուն սարքեր տեղադրելու նպատակով: Բացի այդ, Իսրայելը լրջորեն մարզում է քրդական հատուկ նշանակության ջոկատները՝ վարժեցնելով

դրանք այն առաքելությունը կատարելու համար, որը չկարողացան իրագործել ամերիկյան հատուկ ծառայությունները, այն է՝ թափանցել Իրաքում իսլամական ընդդիմության շարքերը, հավաքել հետախուզական տվյալներ և վերացնել Իրաքի սուննի և շիա «խռովարարների» պարագլուխներին: Իսրայելը մտադիր է նաև օգտագործել քրդական «փեշմերգա» ջոկատները (որոնցում հաշվվում է ոչ պակաս, քան 75 հազ. մարդ)՝ որպես Իրաքի աշխարհիկ, ինչպես և իսլամական ընդդիմությանը դիմակայելու ընդունակ ուժ: Իսրայելցի փորձառու մասնագետները, որ ծառայություն են անցել էլիտար զորամասերում, Քուրդիստանի անապատային մասում հիմնել են խոշոր վարժաճամբար, ուր ուսուցանվում են տեղի քրդերը: Իսրայելցիները Քուրդիստանում աշխատելու ընթացքում նաև կորուստներ են ունենում: Օրինակ, մամուլում տեղեկություններ հայտնվեցին Քիրքուքում (հյուսիսային Իրաք) «Մոսադի» վեց գործակալների սպանության մասին, որին, հնարավոր է, մասնակցություն են ունեցել ծայրահեղական իսլամական «Անսար ալ-Իսլամ» քրդական կազմակերպության գրոհայինները [43]:

Ընդհանուր առմամբ, կարելի է հավաստել, որ Իսրայելը ներկայումս շարունակում է, թեև կիսապաշտոնապես (տարբեր դրածո ընկերությունների և կազմակերպությունների միջոցով), բայց ծրագրված ձևով իրականացնել իր ռազմաքաղաքական ներթափանցումը Իրաքի հյուսիսային քրդաբնակ շրջաններ, ինչպես նաև լայնածավալ տնտեսական ու ենթակառուցվածքային նախագծեր (օրինակ, Էրբիլի մերձակայքում ժամանակակից մեծ օդանավակայնի կառուցումը): Ըստ փորձագետների գնահատականների՝ դա նրան հնարավորություն կտա, Իրանի միջուկային ծրագրի շուրջ իրավիճակի կտրուկ վատթարացման պարագայում (կամ էլ հենց Իրաքում բախումների տարածքի ընդլայնման դեպքում), օգտագործել քրդերի ռեսուրսներն ու հնարավորությունները՝ ազգային շահերին համապատասխան օպերատիվ պատասխան տալու համար:

Ամփոփում

Քրդական գործոնը հրեական պետության ստեղծումից հետո միշտ հատուկ դեր է խաղացել Իսրայելի աշխարհառազմավարության մեջ: Քրդերի և Իսրայելի փոխհարաբերությունները հրեական պետության Մերձավոր և Միջինարևելյան քաղաքականության կարևոր տարրն են հանդիսացել, արդյունավետ կռվան եղել Իրաքի (փոքր չափով՝ նաև Սիրիայի) վրա ճնշում գործադրելու առումով, Բաղդադի կառավարության ուշադրությունը շեղելու և իսրայելա-արաբական հակամարտությանը նրա ակտիվ միջամտությունը թույլ չտալու նպատակով: Ընդ որում՝ հարկ է նշել, որ Իսրայելի

և քրդերի սերտ հարաբերություններին նպաստել է հրեաների և քրդերի պատմական և մշակութային-կենցաղային մերձավորությունը՝ պայմանավորված Իրաքի՝ աշխարհում հնագույնը համարվող մեծաթիվ հրեական համայնքի առկայությամբ: Չնայած գրեթե ամբողջ համայնքը Իրաքից տեղափոխվել է Իսրայել, իրաքյան հրեաները պահպանել են իրենց ինքնատիպությունը, ավանդույթներն ու մշակույթը, և բավական մեծ է նրանց դերը քրդերի, ինչպես նաև Իրաքի, Սիրիայի, Թուրքիայի ու Իրանի հանդեպ Իսրայելի քաղաքականությունը որոշելիս: Սրանում, թեև սահմանափակ, բայց իր դերն է ունեցել նաև Իսրայելի քրդական համայնքը:

Իսրայելը, համագործակցելով ԱՄՆ-ի և շահական Իրանի հետ, 1950-ականներից մինչև 1980-ականների սկիզբը համակողմանի ռազմական և քաղաքական օգնություն էր ցուցաբերում իրաքյան քրդերին, ինչը կարևոր դեր է խաղացել Իրաքի կառավարության դեմ զինված պայքարը շարունակելու գործում: Իրանի և Իրաքի միջև Ալժիրյան համաձայնագրերի ստորագրումը, ինչպես նաև 1979թ. իսլամական հեղափոխությունը բերեցին նրան, որ Թեհրանը դադարեց օժանդակել Իրաքի հյուսիսի քրդերին և, որպես հետևանք, սահմանափակվեց Իսրայելի կողմից, որն ընդհանուր սահման չունի Իրաքի հետ, քրդերին ցուցաբերվող օգնության հնարավորությունը: Արդյունքում՝ կտրուկ նվազեց իսրայելա-քրդական կապերի ակտիվությունը ռազմաքաղաքական ոլորտում, ընդհուպ մինչև 1990-ական թթ. սկիզբը, ինչը, սակայն, չնվազեցրեց քրդական գործոնի նշանակությունը Մերձավոր և Միջին Արևելքում Իսրայելի ընդհանուր աշխարհառազմավարության մեջ: Իրավիճակը կրկին փոխվեց միայն 1991թ. ԱՄՆ-ի և բազմազգ կոալիցիայի «Փոթորիկ անապատում» գործողությունից հետո: 2003թ. ամերիկյան զորքերի ներխուժումն Իրաք և Ս.Հուսեյնի վարչակարգի տապալումը իրական նախադրյալներ ստեղծեցին Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական գործընթացներում քրդական գործոնի նոր ակտուալացման համար: Արդյունքում, բնականաբար, կրկին բարձրացավ քրդերի նշանակությունն Իսրայելի տարածաշրջանային ռազմավարությունում:

Միևնույն ժամանակ, քրդերի հետ Իսրայելի քաղաքական փոխհարաբերությունների մակարդակը շարունակում է զգալի չափով ճշգրտվել արաբական պետությունների, Իրանի և Թուրքիայի դիրքորոշումների հաշվառմամբ: Այնուամենայնիվ, ներկայումս Իրաքում կենսունակ քրդական ինքնավարության ստեղծմամբ քրդերի հետ Իսրայելի համագործակցությունը կրկին կարող է դառնալ ամբողջ տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացների կարևոր գործոններից մեկը: Բնականաբար, դա

բացասաբար կանդրադառնա Թուրքիայի հետ Իսրայելի «ոչ պարզ» գործընկերության առանց այդ էլ բարդ հարաբերությունների վրա, հատկապես եթե Իրանի միջուկային ծրագրի շուրջ գործընթացների զարգացումը առաջիկայում հանգեցնի ԱՄՆ-ի և/կամ Իսրայելի հնարավոր ռազմական գործողությունների Իրանի դեմ: Այս պարագայում իրանական ու իրաքյան քրդերի օգնությունը և մասնակցությունը պարզապես անհրաժեշտ կլինեն Իսրայելի ազգային անվտանգության համար Իրանի միջուկային խնդրի աննախադեպ ակտուալացման ֆոնին: Սակայն չի կարելի բացառել նաև, որ եթե նույնիսկ առկա լինի քաղաքական միջոցներով և Իրանի վրա տարածաշրջանային ճնշում գործադրելու ճանապարհով իրանական հիմնախնդրի չեզոքացման աղոտ հույս, Իսրայելի համար քրդական հարցը հերթական անգամ կարող է դառնալ Թուրքիայի հետ հարաբերությունների խորացման «մանրադրամը»:

Ապրիլ, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Oppenheim A.,* High-resolution Y Chromosome Haplotypes of Israeli and Palestinian Arabs Reveal Geographic Substructure and Substantial Overlap with Haplotypes of Jews // Human Genetics, N.107 (6), December 2000.
2. *Oppenheim A.,* The Y Chromosomes Pool of Jews as Part of the Genetic Landscape of the Middle East // The American Journal of Human Genetics, N.69 (5), November 2001, p.1095-1112; *Traubman T.* Study Finds Close Genetic Connections Between Jews, Kurds // Ha'aretz, 21 November 2001.
3. *Galletti M.,* Kurdistan: A Mosaic of People // Acta Kurdica: The International Journal of Kurdish and Iranian Studies. Vol.1, 1994.
4. The Standard Jewish Encyclopedia: Tribes, Lost Ten and Babylon // A History of the Jewish People, Ed. by Ben-Sasson H.H.
5. *Մանանդյան Հ.,* Տիգրան II-ը և Հռոմը, Երևան, 1940:
6. *Gindzberg L.,* The Legends of the Jews. Philadelphia, 1968.
7. *Grayzel S.,* A History of the Jews. New York, 1968.
8. *Kahle P.,* The Caoro Geniza. Oxford; Jacob Neusner. Iudaism, Christianity, and Zoroastrianism in Talmudic Babylonia. New York, 1986.
9. *Garbell I.,* The Jewish New-Aramaic Dialect of Persian Azerbaijan: Linguistic Analysis and Folkloristic Texts. The Hague, 1965.
10. *Sedan B.,* Groups Try to Revive Aramaic // Jewish Telegraphic Agency (JTA), 25 August 2000.

11. *Brauer E.,* The Jews of Kurdistan. Completed and Edited by R. Patai. Wayne State University Press, Detroit, 1993.
12. *Sabar Y.,* The Folk Literature of the Kurdistani Jews. Yale University Press, New Haven, 1982.
13. Jewish Telegraph Agency (JTA), 7 April 2003.
14. *Patai R.,* Preface, in: *Brauer E.,* The Jews of Kurdistan. Completed and Edited by R. Patai. Wayne State University Press, Detroit, 1993.
15. *Минц Л.,* Кто такие лаклухи? (www.jewish.ru/history/jeworld/9012.asp).
16. *Sachar H.M.,* A History of Israel: From the Rise of Zionism to Our Time. New York, 2000.
17. *Holden S.,* Born in Iraq, Living in Israel, Pondering Issues of Identity. «Forget Baghdad», Movie Review // The New York Times, 5 December 2003.
18. *Штейнберг М.,* Народ без страны // Независимое военное обозрение, 28.11.2003.
19. *Minasian S.,* The Turkish-Israeli Military and Political Co-operation and Regional Security Issues // Iran and Caucasus, vol. VII.
20. *Yinon O.,* Strategie Pour Israel Dans Les Annes 80 // Revue des Etudes Palestiniennes. N.5, 1982, p.73-83; *Yinon O.,* A Strategy for Israel in the Nineteen Eighties. The Zionist Plan for the Middle East. Translated and Edited by Israel Shahak. Association of Arab-American University Graduates, Inc., Belmont, Massachusetts, Special Document N.1, 1982. (also available from http://geocites.com/roundtable_texts/zionistplan.html).
21. *Nachmani A.,* Israel, Turkey and Greece: Uneasy Relations in the East Mediterranean. London, 1987.
22. *Ostrovsky V.,* By Way of Deception: A Davastanding Insider's Portrait of the Mossad. Toronto: Staddart, 1990.
23. *McDowall D.,* A Modern History of the Kurds. Bridgend 1996, p.320, 331; *Mordechai N.* Minorities in the Middle East. Jefferson 1991, p.240-241.
24. *Чалымян Н.Т.,* Сирийско-иракские отношения 1961-1967 гг., Ереван, 2002.
25. *Bengio O.,* Crossing the Rubicon: Iraq and the Arab-Israeli Peace Process // Middle East Review of International Affairs, vol.2, N.1 (March 1998), p.33-34; *Bengio O.* The Kurdish Revolt in Iraq (Hebrew), Tel Aviv Hakibutz Hameuhad, 1989.
26. *Cottam R.W.,* Iran and the Middle East // The Middle East and the Western Alliance / Ed. by Spiegel S.L. CISA: University of California, Los Angeles, 1982.
27. *Marshall J., Scott P.D., Hunter J.,* The Iran Contra Connection: Secret Teams and Covert Operations in the Reagan Era. South End Press, 1987.
28. Reuters, 21.02.1999.
29. *Фабричников И., Фролов А.,* Контрраспространение: хорошо забытое старое // Ядерный контроль, №4 (70), т.9, Зима 2003.
30. *Жигалина О.,* Документы американского посольства в Тегеране по курдскому вопросу // Специальный бюллетень Института востоковедения академии наук СССР, N.6 (270), М., 1990.
31. *Vann B.,* The New York Times: A Proposal for Ethnic Cleansing in Iraq. 26 Novem-

ber 2003, (http://www.wsws.org/sections/category/news/me-iraq.shtml).
32. *Barron A.,* US and Israeli Jews Express Support for Kurdish Refugees // Washington Report of Middle East Affairs, May-June 1991.
33. *Shahak I.,* Open Secrets: Israeli Nuclear and Foreign Policies // (www.abbc.com/historia/shahak/opensec/07.htm).
34. *Washburn J.,* Power Bloc: Turkey and Israel Lock Arms // The Progressive Magazine, December 1998.
35. *Минасян С.,* Израиль - Турция: Военно-политическое и военно-техническое сотрудничество (в аспекте проблем региональной безопасности) // Центральная Азия и Кавказ, №1, 2004.
36. *Ахмедов В.,* Противостояние // Азия и Африка сегодня, N.1, 2000.
37. *Лукоянов А.К.,* Иракский Курдистан и Израиль // ИИИБВ, 10.04.2006.
38. *Рошан М.С.,* Иракские курды идут по политическому канату // www.kurdistan.ru/05.11.04-1.htm, 03.11.2004.
39. Израиль заверяет Турцию: мы не готовим курдских солдат // www.mignews.com/news/scandals/world/041205_200521_87768.html, 05.12.2005.
40. *Մինասյան Ս.,* Իսրայելա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում // 21-րդ ԴԱՐ,#4 (14), 2006:
41. *Сулейманов Р.Р.,* Турецко-израильские отношения на современном этапе // ИИИБВ, 06.03.2007.
42. *Жигалина О.,* Курды и иранский ядерный кризис // ИИИБВ, 16.07.2006.
43. *Лукоянов А.,* Курдистан и Израиль (перспективы сотрудничества) // www.novoemnenie.ru, 08.02.2007.

ИЗРАИЛЬСКО-КУРДСКИЕ ОТНОШЕНИЯ

Сергей Минасян

Резюме

Израильско-курдские отношения имеют глубокие исторические корни. История расселения евреев и распространения иудаизма в курдонаселенных районах уходит в глубокую древность. А культурные связи между курдами и евреями, особенно проживающими на территории нынешнего Ирака, настолько переплетаются, что в некоторых популярных еврейских народных легендах о происхождении курдов они считаются евреями. Иракские евреи,

особенно живущие в центральных районах страны, еще с периода османского владычества занимали важное положение в экономической, культурной и даже политической жизни Ирака. После предоставления Великобританией формальной независимости Ираку в 1932г. иракские евреи сохранили привилегированное положение, играя существенную роль в крупном бизнесе страны и на государственной службе.

С началом так называемой «Палестинской войны» или «Войны Израиля за независимость» 1948-1949 гг. евреи начали подвергаться жестоким преследованиям со стороны арабского правительства. Еврейская община Ирака очутилась в тяжелейшей ситуации и стала активно эмигрировать из страны. В результате, значительная часть евреев покинула Ирак и переселилась в новосозданное Государство Израиль в 1948-1952 гг. Тем не менее, в Израиле они продолжали жить обособленной общиной: отмечали курдские праздники и сохраняли курдскую культуру и язык.

Израильско-курдские отношения приобрели особую политическую значимость на фоне развития политической ситуации на всем Ближнем и Среднем Востоке с середины 1950-х гг. до середины 1970-х гг., как особый региональный фактор в противостоянии евреев с арабскими государствами, образуя составную часть так называемой «периферийной стратегии» Израиля. Взаимоотношения курдов и Израиля явились важным элементом политики еврейского государства на Ближнем и Среднем Востоке, эффективным рычагом давления на Ирак (в меньшей степени и на Сирию) для отвлечения внимания багдадского правительства и недопущения его активного вмешательства в израильско-арабский конфликт.

Актуальность израильско-курдских отношений с новой силой проявилась уже после операции США и союзников против Ирака в 1991г. и особенно после свержения режима С.Хуссейна, когда на севере страны появилась самостоятельная курдская автономия. В то же время уровень политических взаимоотношений Израиля с курдами продолжает в значительной степени корректироваться с учетом позиции арабских государств, Ирана и Турции.